

ՄԻԿՐՈ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ



Գործողության սկիզբ	15/10/2018թ.
Գործողության ավարտ	Սահմանված չէ

Հարգելի վարկառու, բոլոր վարկատուները պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ, որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Վարկի անվանում	Միկրո Վարկ
2.2 Վարկի գումար	60,000-1,500,000 ՀՀ դրամ
2.3 Վարկի ժամկետ	5,9,12,18 և 24 ամիս
2.4 Տարեկան անվանական % (SUS)	24

Այն փոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի փոկոսագումարները:

2.5 Տարեկան փաստացի % (SFS)	29.5
-----------------------------	------

Այն փոկոսադրույքն է, որում, բացի վարկի փոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի SFS-ն չի կարող լինել ավելին, քան այս թերթիկում ներկայացված SFS-ն:

3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Գրավ

3.2 Երաշխավորություն

- խմբային երաշխավորություններ
- 1 080 000 ՀՀԴ գերազանցող վարկերի համար կարող է պահանջվել մեկ լրացուցիչ երաշխավորներ

4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Վարկ/Գրավ Հարաբերակցություն %

4.3 Կանխավճար/Վարկ Հարաբերակցություն %

4.2 Մարումների հաճախականություն

- Մայր գումար
- Տոկոսագումար

Այլ հաճախականության դեպքում նշել ձևը

Գործարարության տեսակից կախված հնարավոր է վարկի մայր գումարի մարման 3,6 և 9 ամիս դադարի շրջան:

5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

5.1 Վարկային հայտի ուսումնասիրության	<input type="text" value="Չի պահանջվում"/>
5.2 Վարկի սպասարկման	<input type="text" value="0% -0.6% ամսական"/>
5.3 Գրավի գնահատման	<input type="text" value="Չի պահանջվում"/>
5.4 Նոտարական վավերացման	<input type="text" value="Չի պահանջվում"/>
5.5 Գրավի ապահովագրության	<input type="text" value="Չի պահանջվում"/>
5.6 Այլ միջնորդավճարներ	<input type="text" value="2% տրամադրման վճար"/>
5.7 Ընդամենը այլ Վճարներ	<input type="text" value="2% - 2.6%"/>

Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար

6. ԶԵՐ ԻՐԱՎՈՒՆԵՐ



Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):
Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:

7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԶԵՁ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

7.1 Վարկի մայր գումար չվճարելու դեպքում	0,13 % օրական, դադարում է ժամկետանց պարտավորության ամբողջական մարման օրը
7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում	0,13 % օրական, դադարում է ժամկետանց պարտավորության ամբողջական մարման օրը
7.3 Այլ վճարներ չկատարելու դեպքում	Չի պահանջվում

7.6 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող է **քննազանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար Ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել Վարկի մարման համար

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում**: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու համար:

8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Ֆիզիկական անձանց դեպքում

- Օանձնագիր/նույնականացման քարտ՝ և սոցիալական քարտ (առկայության դեպքում)
- Օգյուղատնտեսական բիզնեսի հետ առնչվող անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական (առկայության դեպքում)
- Օգյուղատնտեսական տեխնիկայի գրանցման վկայագիր (առկայության դեպքում)
- Օբիգնետում ընդգրկված գյուղատնտեսական գույքի վերաբերյալ տեղեկանք /վկայագիր (առկայության դեպքում)
- Օանասնագիտաքանակի վերաբերյալ տեղեկանք (ըստ անհրաժեշտության)

Ա/Ձ և Իրավաբանական անձանց դեպքում

- Օանձնագիր/նույնականացման քարտ՝ և սոցիալական քարտ (առկայության դեպքում)
- Օպետական ռեգիստրի գրանցման վկայական հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)
- Օլիցենգավորվող գործունեության դեպքում՝ լիցենզիա
- Օգործունեության հետ առնչվող հիմնական պայմանագրեր և համաձայնագրեր, հաշիվ ապրանքագրեր, ակտեր, վճարային հանձնարարագրեր կամ պահանջագրեր
- Օարտոնագրային վճար (ԱՎ) վճարողի վկայագիր (առկայության դեպքում)
- Օիրավաբանակն անձի դեպքում՝ նաև կանոնադրություն՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով
- Օիրավաբանակն անձի դեպքում՝ նաև տեղեկանք Պետական ռեգիստրից կանոնադրության փոփոխության և մասնակիցների վերաբերյալ, մասնակիցների կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշում վարկ ստանալու վերաբերյալ, այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ

7 օր

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ

7 օր

Վարկը տրամադրելու ժամկետ (Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո)

7 օր

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

ԴՈՒՔ ԵՎԱ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,

այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԹՅ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵՁ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախագուշակելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

ՎԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»

այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:



ԻՆՁ Ե ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՈԱ վարկային բյուրոյից՝ այցելելով Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ: Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից